2019-2020 ու.ս. տարի	-	-
2018-2019 ու.ս. տարի	-	-

«Հատուկ մանկավարժություն» մագիստրոսի կրթական ծրագրով ուսումնառողների թվաքանակն ըստ երեք տարիների համեմատականի (կրթական ծրագիրը թողարկվել է 2020-2021 ուսումնական տարվանից) գրանցում է դինամիկ աճ: Ուսումնառողների և դիմորդների շրջանակներում կա մասնագիտության նկատմամբ ինքնահատուկ հետաքրքրվածություն՝ պայմանավորված աշխատաշուկայի հնարավորություններով: Մասնագիտության կայացմանը նպաստել է նաև հրավիրյալ մասնագետների դասավանդումը: Մասնագիտության շրջանավարտների մեծ մասն աշխատում է մասնագիտությամբ:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԼՈԳՈՊԵԴԻԱ

(ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ)

Ուսումնական տարի		
	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ
2022-2023 ուս. տարի	27	16
2021-2022 ուս. տարի	25	11
2020-2021 ուս. տարի	16	16
2019-2020 ուս. տարի	-	-
2018-2019 ուս. տարի	-	-

«Լոգոպեդիա» մագիստրոսի կրթական ծրագրով ուսումնառողների թվաքանակն ըստ երեք տարիների համեմատականի (կրթական ծրագիրը թողարկվել է 2020-2021 ուսումնական տարվանից) գրանցում է դինամիկ աճ: Ուսումնառողների և դիմորդների շրջանակներում կա մասնագիտության նկատմամբ հետաքրքրվածություն՝ պայմանավորված աշխատաշուկայի հնարավորություններով: Մասնագիտության կայացմանը նպաստել են նաև հրավիրյալ մասնագետները:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
(ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ)

Ուսումնական տարի		
	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ
2022-2023 ուս. տարի	22	11
2021-2022 ուս. տարի	32	14
2020-2021 ուս. տարի	32	20
2019-2020 ուս. տարի	26	13
2018-2019 ուս. տարի	23	10

«Կրթության կազմակերպում» մագիստրոսի կրթական ծրագրով ուսումնառողների թվաքանակն ըստ հինգ տարիների համեմատականների՝ գրանցում է աճ՝ ուսումնառողների թվաքանակը 23-ից հասնելով 32-ի, ապա կտրուկ նվազելով 22-ի: Հարկ է աշխատանքներ իրականացնել՝ թվաքանակի աճ գրանցելու համար:

ՄՊՈՐՏԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԱՄԲԻՈՆ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ

(ԲԱԿԱԼԱՎՐ/ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ)

Ուսումնական տարի		
	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ
2022-2023 ուս. տարի	187	53
2021-2022 ուս. տարի	183	51
2020-2021 ուս. տարի	187	60
2019-2020 ուս. տարի	165	53
2018-2019 ուս. տարի	155	27

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ

ԲԱԿԱԼԱՎՐ/ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ

Ուսումնական տարի	Առկա		Հեռակա		Մագիստրատուրա	
	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ
2022-2023 ուս. տարի	69	22	108	26	10	5
2021-2022 ուս. տարի	73	29	99	15	11	7
2020-2021 ուս. տարի	75	30	106	26	6	4
2019-2020 ուս. տարի	68	27	90	23	7	3
2018-2019 ուս. տարի	61	8	85	14	9	5

«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» (բակալավր/մագիստրատուրա) մասնագիտությամբ ուսումնառողների թվաքանակն ըստ հինգ տարիների համեմատության՝ հանգեցնում է այն հետևության, որ ուսանողների քանակն ավելացել է՝ 155-ից դառնալով 187: Հարկ է ընդգծել, որ այս մասնագիտության ուղղվածությամբ դիմորդների ներգրավվածության առումով իրականացվում է հետևողական աշխատանք, քանզի 2022-2023 ուսումնական տարում ընդունվել են 53 ուսանող առկա և հեռակա ուսուցման համակարգերում, իսկ մագիստրատուրայում՝ 5 ուսանող:

ՄՊՈՐՏԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԱՄԲԻՈՆ

ԴԵԿՈՐԱՏԻՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍ

(ԲԱԿԱԼԱՎՐ/ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ)

Ուսումնական տարի	Ուսանողների թիվ	
	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ
2022-2023 ու.ս. տարի	23	8
2021-2022 ու.ս. տարի	28	6
2020-2021 ու.ս. տարի	28	2
2019-2020 ու.ս. տարի	39	3
2018-2019 ու.ս. տարի	50	5

ԴԵԿՈՐԱՏԻՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ

(ԲԱԿԱԼԱՎՐ/ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ)

Ուսումնական տարի	Առկա		Մագիստրատուրա	
	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ
2022-2023 ու.ս. տարի	18	7	5	1
2021-2022 ու.ս. տարի	21	9	7	4
2020-2021 ու.ս. տարի	20	3	8	3
2019-2020 ու.ս. տարի	21	5	10	5
2018-2019 ու.ս. տարի	30	4	9	4

«Դեկորատիվ կիրառական արվեստ» մասնագիտությամբ ուսումնառողների թվաքանակի համեմատականներով նշենք, որ հարկ է մշակել գործողությունների պլան-ժամանակացույց՝ դիմորդներին մասնագիտության ուղղությամբ շահադրդելու համար: Բակալավրի առկա ուսուցմամբ ուսանողների թվաքանակը նվազել է, իսկ մագիստրոսի կրթական ծրագրով 2022-2023 ուսումնական տարվանից ընդունելություն չի իրականացվում:

ՄՊՈՐՏԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԱՄԲԻՈՆ

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳՐԱՖԻԿԱ

ԲԱԿԱԼԱՎՐ

Ուսումնական տարի		
	Ուսանողների թիվ	Ընդունելության ցուցանիշներ
2022-2023 ու.ս. տարի	13	0
2021-2022 ու.ս. տարի	15	1
2020-2021 ու.ս. տարի	20	10
2019-2020 ու.ս. տարի	10	4
2018-2019 ու.ս. տարի	7	2

«Համակարգչային գրաֆիկա» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով ուսումնառողների թվաքանակն ըստ հինգ տարիների համեմատության՝ նվազել է, որը հանգեցրել է կրթական ծրագրի ընդհատման: 2023-2024 ուսումնական տարում մասնագիտությամբ ուսումնառում են միայն 3-րդ և 4-րդ կուրսի ուսանողները:

❖ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ

Հաշվետու տարում բակալավրի առկա և հեռակա ուսուցման համակարգերի դիմորդների հավաքագրման գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացման առումով բուհում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, որոնց շրջանակներում ֆակուլտետը դրսևորել է նաև իր մասնակցայնությունը: Ստորև ներկայացնում ենք Հասարակական գիտությունների ֆակուլտետի բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրի (առկա, հեռակա) մասնագիտություններն ըստ

ընդունելության քննությունների: Նշենք, որ մագիստրոսի կրթական ծրագրերում ուսումնառող ուսանողական համակազմի մեջ կարևոր է այն, թե ի՞նչ շահադրվածություն ունեն նույն կրթական ծրագրով բակալավրի դիմորդները: Հարցի համատեքստում ֆակուլտետում ունենք կրթական ծրագրեր, որոնց ուղղությամբ մագիստրոսական կրթական աստիճանում նույն կրթական ծրագրով բակալավրի դիմորդների թիվը քիչ է: Կարծում ենք՝ մասնագիտական ամբիոններն այս ուղղությամբ լուրջ անելիքներ ունեն (Հոգեբանության և սոցիոլոգիայի, Մանկավարժության):

**ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԲԱԿԱԼԱՎՐԸ
ԱՎԱՐՏԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ**

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹԻՎ
Հոգեբանություն	28/7
Սոցիալական աշխատանք	8/5
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	18/3
Ֆիզ. դաստ. և սպորտ մարզումներ	10/2

ԱՄԲԻՈՆ/ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	ՇՐՋԱՆԱՎԱՐՏ 2022-2023	ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2023-2024
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ	120	63
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ	104	64
ՄՊՈՐՏԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ	41	70


ԸՆԴԱՄԵՆԸ	265	197
----------	-----	-----

Մասնագիտական երկու ամբիոններում՝ Հոգեբանության և սոցիոլոգիայի, Մանկավարժության, շրջանավարտների թվական տվյալների համեմատությամբ ընդունելության ցուցանիշները քիչ են գրանցվել: Իսկ Սպորտի և արվեստի ամբիոնում դիմորդների ընդունելության ցուցանիշների աճ է գրանցվել:

2021-2022 հաշվետու ուսումնական տարում մասնագիտական երեք ամբիոնների թողարկած կրթական ծրագրերով սովորել է 1023 ուսանող: 2022-2023 ուսումնական տարում ֆակուլտետում սովորում են 969 ուսանող: Կրթական ծրագրերն իրականացվում են ֆակուլտետի մասնագիտական երեք ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի 79 դասախոսների կողմից: 2023-2024 ուսումնական տարում ֆակուլտետում ուսումնառում են 935 ուսանողներ: Վերջին տարում ուսանողների թվաքանակը նվազել է պայմանավորված դիմորդների ընդունելությամբ:

Ֆակուլտետի ուսանողական կազմ

2021-2022	2022-2023	2023-2024
1023	969	935



Ֆակուլտետում դիմորդների հավաքագրման գործընթացներն իրականացվել են միջոցառումների, խորհրդատվական հանդիպումների միջոցով՝ իրականացնելով մասնագիտական կողմնորոշում: Դիմորդների ներգրավվածության առումով մասնագիտական երեք ամբիոններն էլ իրականացրել են տարաբնույթ աշխատանքներ, որոնք երբեմն կրել են չհամակարգված բնույթ: Այդ փաստը նկատի ունենալով՝ ֆակուլտետում մշակվել է դիմորդների ներգրավվածությունն ապահովող և կանոնարկող փաստաթուղթ, որում արտացոլված են այն բոլոր գործողությունները, որոնք ապահովելու են դիմորդների մուտքը բուհ:

2022-2023 ուումնական տարում բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգի դիմորդների մուտքային գնահատականները 2022-2023 ուսումնական տարվա ավարտին առաջադիմության համեմատությամբ

<u>Մասնագիտություն</u>	<u>Միավորների առավելագույն շեմ</u>	<u>Միավորների նվազագույն շեմ</u>	<u>Ընդունելության գնահատականներ թվաբանական միջին</u>	<u>Առաջադիմություն (1-ին կուրս)</u>
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	24	20,75	22	0%
Հոգեբանություն	36,25	19	21,75	17,64%
Սոցիալական աշխատանք	38	18,75	26,33	44,44%
Սոցիոլոգիա	20,75 (1 ուսանող)	-	-	50%
Ֆիզիկական դաստ. և սպորտային մարզումներ	28,35	16	20,09	11,76%
Դեկորատիվ կիրառական արվեստ	29	16	21,66	16.6%

2022-2023 ուումնական տարում բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման համակարգի դիմորդների մուտքային գնահատականները 2022-2023 ուսումնական տարվա ավարտին առաջադիմության համեմատությամբ

<u>Մասնագիտություն</u>	<u>Միավորների առավելագույն շեմ</u>	<u>Միավորների նվազագույն շեմ</u>	<u>Ընդունելության գնահատականներ թվաբանական միջին</u>	<u>Առաջադիմություն (1-ին կուրս)</u>
Տարրական մանկավարժություն և	21,75	17	19,79	0%

մեթոդիկա				
Հոգեբանություն	20,75	15,25	17,70	0%
Սոցիալական աշխատանք	23,50	15,75	18,25	0%
Ֆիզիկական դաստ. և սպորտային մարզումներ	25,35	17	19,79	0%

2022-2023 ուսումնական տարում մագիստրոսի կրթական ծրագրով դիմորդների մուտքային գնահատականները
2022-2023 ուսումնական տարվա ավարտին առաջադիմության համեմատությամբ

<u>Մասնագիտություն</u>	<u>Միավորների առավելագույն շեմ</u>	<u>Միավորների նվազագույն շեմ</u>	<u>Ընդունելության գնահատականներ թվաբանական միջին</u>	<u>Առաջադիմություն (1-ին կուրս)</u>
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	96,43	48,25	76,72	41,66%
Հատուկ մանկավարժություն	100	60,55	79,15	52,63 %
Սոցիալական մանկավարժություն	92,16	56,8	73,25	66,66 %
Կրթության կազմակերպում	90,05	51,78	76,04	81,81%
Լոգոպեդիա	93,48	56	77,16	37,5%
Հոգեբանություն	97,33	53,22	80,63	69,23%
Սոցիալական աշխատանք	100	59,64	84,44	53,33 %
Ֆիզիկական դաստ. և սպորտային մարզումներ	93,12	68,14	79,14	40 %

Դեկորատիվ կիրառական արվեստ	87,3 (1 ուսանող)	-	-	100 %
----------------------------	---------------------	---	---	-------

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԿԱ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԵՐԱԶԱՆՑ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ

2019-2020, 2020-2021, 2021-2022 ԵՎ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ

ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		2019-2020 ուստարի	2020-2021 Ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 Ուստարի
Հոգեբանություն	1-ին կուրս	50%	50%	31,42%	17,64%
	2-րդ կուրս	25%	50%	70%	32,35%
	3-րդ կուրս	66,66%	33%	85,71%	68,75%
	4-րդ կուրս	53,33 %	71%	87,5%	82,75%
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	1-ին կուրս	5,55 %	11,11 %	0%	0%
	2-րդ կուրս	57, 14 %	16,66 %	27,7%	23,52%

	3-րդ կուրս	41,6 %	57,14 %	61,11%	37,5 %
	4-րդ կուրս	59,25 %	41,66 %	50%	33, 33%
Սոցիալական աշխատանք	1-ին կուրս	25%	80%	27,7%	44,44%
	2-րդ կուրս	50%	83%	81,8%	53,33%
	3-րդ կուրս	100%	75%	55,5%	100%
	4-րդ կուրս	63,63%	100%	62,5%	55, 55%
Սոցիոլոգիա	1-ին կուրս	45%	50%	6,25%	50%
	2-րդ կուրս	100%	46%	50%	23,07%
	3-րդ կուրս	52,94%	100%	69,56%	55, 55 %
	4-րդ կուրս	-	75%	100%	55, 55 %
Ֆիզիկական դասիարակություն և սպորտային մարզումներ	1-ին կուրս	0%	0%	2,7%	11,76%
	2-րդ կուրս	9,10%	31,25%	10%	21,05 %
	3-րդ կուրս	26,31%	18,8%	25%	4, 76%
	4-րդ կուրս	18,18%	21%	18,18%	44,44 %
Դեկորատիվ կիրառական արվեստ	1-ին կուրս	25%	66,6%	33,3%	16,6%
	2-րդ կուրս	25%	60%	33,3%	83,33 %
	3-րդ կուրս	75%	50%	60% ⁹	50 %
	4-րդ կուրս	0%	100%	100%	100 %
Համակարգչային գրաֆիկա	1-ին կուրս	75%	40%	0%	-
	2-րդ կուրս	0%	100%	66,6%	0 %

	3-րդ կուրս	100%	100%	75%	75 %
	4-րդ կուրս	-	100%	100%	-

Հաշվետու տարում, ըստ չորս ուսումնական տարիների համեմատականների, բոլոր մասնագիտական ծրագրերի 1-4-րդ կուրսերի ուսանողների առաջադիմության համեմատականներում գրանցվում է դինամիկ աճ: Հարկ է ուշադրություն բերել 100% առաջադիմություն գրանցած կուրսերի տվյալներին, ուսանողների գնահատմանը: **Առաջարկվում է նման կուրսերում անցկացնել մնացորդային գիտելիքի ստուգում:**

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ՝ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ

ԳԵՐԱԶԱՆՑ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ

2019-2020, 2020-2021, 2021-2022 ԵՎ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		2019-2020	2020-2021	2021-2022	2022-2023
		ուստարի	ուստարի	Ուստարի	ուստարի
Սոցիալական աշխատանք	1-ին կուրս	94,44%	61%	84,2%	53,33 %
	2-րդ կուրս	100%	94%	71,4%	94,73 %
Հոգեբանություն	1-ին կուրս	50%	63%	50%	69,23 %
	2-րդ կուրս	52%	77%	50%	87, 5 %
Սոցիալական մանկավարժություն	1-ին կուրս	85,71%	50%	100%	66,66 %
	2-րդ կուրս	70 %	100%	80%	66, 66 %
Հատուկ մանկավարժություն	1-ին կուրս	-	93,75%	92,85%	52,63 %
	2-րդ կուրս	-	-	93,75%	85,71 %
Լոգոպեդիա	1-ին կուրս	-	100%	90,90%	37, 5 %
	2-րդ կուրս	-	-	100%	81, 81 %
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	1-ին կուրս	41,17%	66,66%	66,66%	41,66 %
	2-րդ կուրս	82,35%	76,47%	66,66%	62,5%
Կրթության կազմակերպում	1-ին կուրս	90,90%	94,44 %	94,44%	81, 81%

	2-րդ կուրս	94,44 %%	100%	100%	100 %
Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	1-ին կուրս	20%	75%	100%	40 %
	2-րդ կուրս	0%	40%	50%	80 %
Դեկորատիվ կիրառական արվեստ	1-ին կուրս	20%	100%	100%	100 %
	2-րդ կուրս	75%	33,3%	66,6%	100 %

Հաշվետու ուսումնական տարում Հասարակական գիտությունների ֆակուլտետի՝ մագիստրոսի կրթական ծրագրով մասնագիտությունների շատ կուրսերում գրանցվել է առաջադիմության աճ: Հարկ է ուշադրություն բերել 100% առաջադիմություն գրանցած կուրսերի ցուցանիշներին, ուսանողների գնահատմանը: **Առաջարկվում է սվյալ կուրսերում անցկացնել մնացորդային գիտելիքի ստուգում:**

2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ

ԹՈՒՅԼԱՏՐԿԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

№	Մասնագիտություն	Առկա/Հեռակա/ Մագիստրատուրա	Ուսանողների քանակ	Դիպլոմի տեսակը	
				Գերազ.	Ոչ գեր.
1.	Սոցիալական աշխատանք	Ա	8	4	3
2.	Հոգեբանություն	Ա	28	12	16
3.	Սոցիոլոգիա	Ա	21	10	11
4.	Տարրական մանկ. և մեթոդիկա	Ա	18	2	16
5.	Ֆիզ. դաստ. և սպորտ. մարզումներ	Ա	10	3	7
6.	Դեկորատիվ կիրառական արվեստ	Ա	3	1	2
7.	Համակարգչային գրաֆիկա	Ա	3	3	0
8.	Սոցիալական աշխ.	Հ	15	1	14
9.	Հոգեբանություն	Հ	13	1	12
10.	Տարրական մանկ. և մեթոդիկա	Հ	12	0	12
11.	Նախադպրոցական մանկ. և մեթոդիկա	Հ	9	0	8
12.	Սոցիալական մանկավարժություն	Հ	6	0	6
13.	Ֆիզ. դաստ. և սպորտ. մարզումներ	Հ	16	0	14

14.	Հոգեբանություն	Մ	16	10	6
15.	Սոցիալական աշխատանք	Մ	19	10	9
16.	Տարրական մանկ. և մեթոդիկա	Մ	16	9	7
17.	Կրթության կազմակերպում	Մ	11	10	1
18.	Սոցիալական մանկավարժություն	Մ	7	3	4
19.	Հատուկ մանկավարժություն	Մ	14	9	5
20.	Լոգոպեդիա	Մ	11	4	7
21.	Ֆիզ. դաստ. և սպորտ. մարզումներ	Մ	5	3	2
22.	Դեկորատիվ կիրառական արվեստ	Մ	4	4	0
ԸՆԴԱՄԵՆԸ՝			265	99	166

Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին դիտարկվում է գերազանցության դիպլոմների թվաքանակի աճ, որը մագիստրատուրայում, թերևս, պայմանավորված է դիպլոմների շնորհման կարգի մեջ իրականացված փոփոխությամբ, համաձայն որի՝ 90 և բարձր ՄՈԳ ունեցող ուսանողին շնորհվում է գերազանցության դիպլոմ, ի տարբերություն նախորդ կարգի, որը սահմանում էր 95 և բարձր ՄՈԳ: Հաշվետու ուսումնական տարում ֆակուլտետն ունեցել է 265 շրջանավարտ, որոնցից չեն ատեստավորվել 4 ուսանող (1,5 %): Գերազանցության դիպլոմ են ստացել 261 ուսանողից 99 ուսանող (37,35%):

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԿԱՐԻԵՐԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ

N	Մասնագիտությունը	Կրթ. մակ.	Շրջ. թիվը	Աշխ. է իր մասն .	Աշխ. ոչ իր մասն .	Չի աշխ.	Արտ երկր. է	Տեղեկ. չկա
1.	Տարր. մանկ. և մեթոդիկա	Բակ. առկա	18	8	3	7	-	-
2.	Տարր. մանկ. և մեթոդիկա	Բակ. հեռակա	12	6	2	2	2	-
3.	Ն/դ մանկ և մեթոդիկա	Բակ. հեռակա	9	6	1	2	-	-
4.	Մոց. մանկավարժություն	Բակ. հեռակա	6	1	2	3	-	-
5.	Տարր. մանկ. և մեթոդիկա	Մագ. առկա	16	10	6	-	-	-
6.	Մոց. մանկավարժություն	Մագ. առկա	7	3	4	-	-	-
7.	Հատուկ մանկավարժություն	Մագ. առկա	14	12	2	-	-	-
8.	Լոգոպեդիա	Մագ. առկա	11	3	3	5		
9.	Կրթության կազմակերպում	Մագ. առկա	11	8	-	3	-	-
	Ընդամենը		104	57	23	21	2	

Մանկավարժության ամբիոնի 104 շրջանավարտներից չի աշխատում 21-ը (20,19%), իրենց մասնագիտությամբ են աշխատում 57 շրջանավարտ (54,80%), և ոչ իրենց մասնագիտությամբ են աշխատում 23 շրջանավարտ (22,11%):

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԱՄԲԻՈՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ

N	Մասնագիտությունը	Կրթ. աստիճան	Շրջ. թիվը	Աշխ. է իր մասն	Աշխ. ոչ իր մասն	Չի աշխ.	Արտ երկր. է	Տեղեկ. չկա
1.	Հոգեբանություն	Մագ. առկա	17	4	3	10	-	-
2.	Հոգեբանություն	Բակ. առկա	28	7	5	18	-	-
3.	Հոգեբանություն	Բակ. հեռակա	13	2	3	8	-	-
4.	Սոցիալական աշխատանք	Մագ. առկա	19	3	9	7	-	-
5.	Սոցիալական աշխատանք	Բակ. առկա	7	3	1	3	-	-
6.	Սոցիալական աշխատանք	Բակ. հեռակա	15	4	6	5	-	-
7.	Սոցիոլոգիա	Բակ. առկա	21	2	6	14	-	-
	Ընդամենը		120	25	33	65	-	-

Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի 120 շրջանավարտներից չի աշխատում 65-ը (54,16%), իրենց մասնագիտությամբ են աշխատում 25 շրջանավարտ (20,83%), և ոչ իրենց մասնագիտությամբ են աշխատում 33 շրջանավարտ (27,5%):


ՄՊՈՐՏԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԱՄԲԻՈՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ

N	Մասնագիտությունը	Կրթ. մակ.	Շրջ. թիվը	Աշխ. է իր մասն.	Աշխ. ոչ իր մասն.	Չի աշխ.	Արտ երկր. է	Տեղեկ. չկ ա
1.	Ֆիզ. դաստիարակություն սպորտային մագումներ	և Բակ. առկա	10	6	4	-	-	-
2.	Ֆիզ. դաստիարակություն սպորտային մագումներ	և Բակ. հեռակա	16	10	3	5	-	-
3.	Ֆիզ. դաստիարակություն սպորտային մագումներ	և Մագ. առկա	5	5	-	-	-	-
4.	Դեկորատիվ կիրառական արվեստ	Բակ. առկա	3	-	-	2	1	-
5.	Դեկորատիվ կիրառական արվեստ	Մագ. առկա	4	3		1		-
6.	Համակարգչային գրաֆիկա	Բակ. առկա	3	2		1		-
	Ընդամենը՝		41	26	7	9	1	-

Սպորտի և արվեստի ամբիոնի 41 շրջանավարտներից չի աշխատում 9-ը (21,95%), իրենց մասնագիտությամբ են աշխատում 26 շրջանավարտ (63,41%), և ոչ իրենց մասնագիտությամբ են աշխատում 7 շրջանավարտ (17,07%):

Իրենց մասնագիտությամբ աշխատող ուսանողների թիվը՝ ըստ երեք ամբիոնների՝

Ամբիոնը	Ուսանողների ընդհանուր քանակը	Իրենց մասնագիտությամբ աշխատողները
Մանկավարժության ամբիոնի շրջանավարտներ	104	57
Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի շրջանավարտներ	120	25
Մպորտի և արվեստի ամբիոնի շրջանավարտներ	41	26



Ֆակուլտետի 261 շրջանավարտից իրենց մասնագիտությամբ են աշխատում 108 շրջանավարտ (40,14 %):


- ❖ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ
- ❖ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿՇԻՌԸ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԹՎԻ ՄԵՉ
- ❖ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿՇԻՌԸ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԹՎԻ ՄԵՉ

Դասախոսական կազմի բաշխումն ըստ աշխատանքային պայմանագրի ձևերի

	2022-2023
Հիմնական դասախոսական կազմը	51
Համատեղությամբ դասավանդողներ	20
Ժամավճարով աշխատողներ	8
Ընդհանուր	79


Ֆակուլտետում ուսումնագիտական, ուսումնակրթական գործունեություն են իրականացնում **79 աշխատակից՝** հիմնական, համատեղող և ժամավճարային կարգով ներառյալ, որից՝

- ✓ գիտական աստիճան (գիտ. թեկն.) ունի 34-ը (43 %),
- ✓ գիտական կոչում (դոցենտ)՝ 20-ը (25,3 %),
- ✓ պրոֆեսոր՝ 7 (8,9%), դոկտոր՝ 5 (6,3 %),
- ✓ դասախոս՝ 37 (46,8 %):



Ֆակուլտետի 79 աշխատակցից՝


- ✓ 51-ը հիմնական են (64,6 %),
- ✓ 20-ը՝ համատեղությունը (25,3%),
- ✓ 8-ը՝ ժամավճարային հիմունքներով (10,1%):



Ֆակուլտետի 79 աշխատակցից՝

- ✓ 22-ը տարիքային բաշխվածությամբ՝ մինչև 40 տարեկան են (27, 9%),
- ✓ 40 դասախոս՝ 40-60 տարեկանի միջակայքում (50,6%),
- ✓ 17 դասախոս՝ 60-ից բարձր տարիքային խումբ (21,5%):

Եզրակացնում ենք, որ ֆակուլտետը ծերացող չէ, սակայն հարկ է մասնագիտական ամբիոններում իրականացնել սահուն սերնդափոխության ռազմավարություն՝ համադիր ՇՊՀ-ի Ռազմավարական ծրագրին:



Ֆակուլտետի ուսանող/դասախոս հարաբերակցությունը

	2021-2022	2022-2023
Ֆակ. պրոֆեսորադասախոս. կազմ	79	79
Հիմնական ուսանողական կազմ	1023	969
Ուսանող / դասախոս հարաբերակցությունը	12,94	12,26

Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի ուսանող/դասախոս հարաբերակցությունը

Մասնագիտություն	Ուսանող	Ցուցանիշ
Հոգեբանություն	194	13, 85
Սոցիալական աշխատանք	161	13,41
Սոցիոլոգիա	62	7,75

Մանկավարժության ամբիոնի ուսանող/դասախոս հարաբերակցությունը

Մասնագիտություն	Ուսանող	Ցուցանիշ
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	172	28,66
Սոցիալական մանկավարժություն	24	4
Նախադպրոցական մանկ. և մեթոդիկա	33	5,5

Հատուկ մանկավարժություն	32	4,57
Լոգոպեդիա	27	3,87
Կրթության կազմակերպում	22	2,75

Սպորտի և արվեստի ամբիոնի ուսանող/դասախոս հարաբերակցությունը

Մասնագիտություն	Ուսանող	Ցուցանիշ
Ֆիզիկական դաստ. և սպորտ. մարզումներ	187	12,46
Դեկորատիվ կիրառական արվեստ	23	2,87
Համակարգչային գրաֆիկա	13	2,6

Ֆակուլտետի ուսանող/ուսումնառական կազմ հարաբերակցությունը

	2021-2022	2022-2023
Ֆակ. ուսումնառական կազմ	5	5
Հիմնական ուսանողական կազմ	1023	969


Ուսանող / ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը	204,6	193,8
---	-------	-------

Ֆակուլտետի ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը

	2021-2022	2022-2023
Ուսումնաօժանդակ կազմ	5	5
Հիմնական ուսանողական կազմ	1023	969
Ուսանող / ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը	204,6	193,8

Ուսումնական երկու տարիների համեմատականով ֆակուլտետի ուսանող/ուսումնաօժանդակ հարաբերակցությունը փոխվում է՝ 12,94-ից դառնալով 12,26՝ պայմանավորված ուսանողական համակազմի փոփոխությամբ: Նույնը կարելի է նշել ուսանող / ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցության վերաբերյալ. ուսումնական երկու տարիների համեմատականով ֆակուլտետի ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը փոխվում է՝ 204,6-ից դառնալով 193,8:

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՍԲԻՈՆՆԵՐԻ ՊՐՈՑԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ
ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ**




Ըստ մասնագիտական երեք ամբիոնների գենդերային բաշխվածության վերլուծության՝ իգական սեռը գերակշռող է հանդիսանում: Իգական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը վերջին 5 տարիներին բավականին կայուն է և տատանվում է 60 %-ի սահմաններում:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԱՄԲԻՈՆ


Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի 26 դասախոսից՝

- գիտական աստիճան (գիտ. թեկն) ունի 7-ը (26,9 %),
- գիտական կոչում (դոցենտ)՝ 5-ը (19,2 %),
- պրոֆեսոր՝ 1-ը,
- դոկտոր՝ 1-ը (3,8 %),
- դասախոս՝ 18-ը (69,2 %):



Ըստ տարիքային խմբերի՝


- մինչև 40՝ 14 (53,9 %)
- 40-60՝ 9 (34,6%)
- 60-ից բարձր՝ 3 (11,5%)



Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնը ֆակուլտետի երիտասարդ մասնագիտական ամբիոնն է:

Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի աշխատակիցներից՝

- հիմնական՝ 20-ը (76,95%),
- համատեղող՝ 6-ը (23, 15%/),
- ժամավճարային՝ 0:




Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնում գերակշիռ են հիմնական աշխատողները:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Մանկավարժության ամբիոնի 30 դասախոսից՝

- գիտական աստիճան/գիտ. թեկն. ունի 18-ը (60 %),
- գիտական կոչում/դոցենտ՝ 10-ը (33,3 %),
- պրոֆեսոր՝ 3-ը (10%),
- դոկտոր՝ 4-ը (13,3 %),





- դասախոս՝ 8-ը (26,7 %):

Ըստ տարիքային խմբերի՝

- մինչև 40՝ 4-ը (13,3%)
- 40-60՝ 21-ը (70%)
- 60-ից բարձր՝ 5-ը (16,7%)

Մանկավարժության ամբիոնի ամբիոնի աշխատակիցներից՝


- հիմնական՝ 15-ը (50%),
- համատեղող՝ 10-ը (33,3%),
- ժամավճարային՝ 6-ը (16,7%):



ՄՊՈՐՏԻ ԵՎ ԱՐՎԵՍԻ ԱՄԲՈՆ


Մպորտի և արվեստի ամբիոնի 23 դասախոսից՝

- գիտական աստիճան (գիտ. թեկն.) ունի 9-ը (39,1 %),
- դոցենտ՝ 5 (21,7 %),
- պրոֆեսոր՝ 3 (13%),
- դոկտոր՝ 0,
- դասախոս՝ 11 (47,8 %):




Ըստ տարիքային խմբերի՝

- մինչև 40՝ 4 (17,4%)
- 40-60՝ 10(43,5%)
- 60-ից բարձր՝ 9 (39,1%)



Մպորտի և արվեստի ամբիոնի 23 դասախոսից՝

- հիմնական՝ 16-ը (69,6%),
- համատեղող՝ 4-ը (17,4%),
- ժամավճարային՝ 3-ը (13%)



❖ **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ**

Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի 26 դասախոսից 6 դասախոս ունեցել են ընդամենը **12 գիտական հոդված (23,07%)**:

Մանկավարժության ամբիոնի 30 դասախոսից 4 դասախոս ունեցել է ընդամենը **4 գիտական հոդված (13,3 %)**:

Սպորտի և արվեստի ամբիոնի 23 դասախոսից 3 դասախոս ունեցել է **5 գիտական հոդված (13, 04 %)**:

Ֆակուլտետի 79 աշխատակցից ընդամենը 13-ն են ունեցել **21 գիտական հոդված (16,45 %)**:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ամբիոն	Մասնագիտություն	Ուսանողների թիվ
Հոգեբանության և սոցիոլոգիայի	Հոգեբանություն	6
	Սոցիոլոգիա	3
	Սոցիալական աշխատանք	1
Սպորտի և արվեստի	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	2

Անդրադառնալով ուսանողների հետազոտական գործունեությանը՝ նշենք, որ Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնում 10 ուսանողներ են իրականացրել հետազոտական գործունեություն, իսկ Սպորտի և արվեստի ամբիոնում՝ երկու ուսանողներ:

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի 26 դասախոսից մասնագիտական վերապատրաստման են մասնակցել 8 դասախոս (30,76 %): Մանկավարժության, Սպորտի և արվեստի ամբիոնի դասախոսները մասնագիտական վերապատրաստման չեն մասնակցել: Մանկավարժության ամբիոնից 3 դասախոս, Սպորտի և արվեստի ամբիոնից 3 դասախոս մասնակցել են ՈԱԱԿ-ից կողմից անցկացված եռօրյա վերապատրաստումներին:

Մասնագիտական 3 ամբիոնների դասախոսներն էլ մասնակցել են Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստումներին:

❖ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ, ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ՈՒԹՂՍ

/SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հասարակական գիտությունների ֆակուլտետն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և բուհի կողմից սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար: Ֆակուլտետը հետևողականորեն իրականացնում է նպատակային գործունեություն՝ ուղղված մասնագիտությունների կրթական ծրագրերի, կադրային և նյութատեխնիկական ռեսուրսների ապահովմանը, դրանց շարունակական համալրմանն ու որակական բարելավմանը:

Հասարակական գիտությունների ֆակուլտետի մասնագիտական ամբիոններում կենտրոնացված է ընդհանուր և մասնագիտական գրականություն, ինչպես հայերեն, այնպես էլ օտար լեզուներով: Ընդհանուր առմամբ, բուհի ռեսուրսային բազան հնարավորություն է տալիս՝ իրականացնելու ՄԿԾ-երը տեսական բնույթի դասընթացների իրականացման տեսանկյունից, որը կարելի է համարել բավարար, սակայն կիրառական բնույթի դասընթացների իրականացման տեսակետից դեռևս շատ անելիքներ կան, հատկապես ռեսուրսային բազայի հարստացման ուղղությամբ: Հատուկ կարիք ունեցող ուսանողներին կրթական միջավայրը հասանելի դարձնելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել համապատասխան պայմաններ:

Ֆակուլտետում գործում է նաև Հոգեբանական ծառայությունների և խորհրդատվության կենտրոնը, որի նպատակն է բուհի ներքին շահառուների կարիքների բավարարման նպատակով տրամադրել սոցիալ-հոգեբանական ծառայություններ, իրականացնել սոցիալ-հոգեբանական գիտելիքների վերազինման վերապատրաստումներ և սեմինարներ / կենտրոնի նպատակն ու խնդիրները սահմանված են ՇՊՀ-ի Սոցիալ-հոգեբանական ծառայությունների կենտրոնի կանոնադրությամբ՝ հաստատված Գիտական խորհրդի՝ 2021թ. հոկտեմբերի 26-ի նիստում /:

Ֆակուլտետի Ուժ/Նեղություն /SWOT վերլուծություն

Ուժեղ կողմերը(Strength)	Թույլ կողմերը(Threats)
<p>1. Կառավարման մարմինների որոշումների կայացմանը վերաբերող հարցերը և իրավասությունների շրջանակը սահմանված է բուհի կանոնադրությամբ:</p> <p>2. Ֆակուլտետն ունի գործող, կենսունակ խորհուրդ, որի գործունեության շրջանակներում մշտապես գնահատվում է</p>	<p>1. ՊԴ և ՈԻՕ կազմի օտար լեզվի իմացության ցածր մակարդակ և արտագնա ակադեմիական շարժունության ցածր հնարավորություններ:</p> <p>2. Կիրառվող դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ոչ միշտ համահունչ լինելը ակնկալվող կրթական վերջնարդյունքներին:</p> <p>3. Ուսանողների՝ օտար լեզուների իմացության ցածր մակարդակ:</p> <p>4. Ուսումնական խորհրդատուների/մենթորների ցածր արդյունավետությամբ աշխատանք:</p>

<p>Ֆակուլտետում կազմակերպվող աշխատանքների արդյունավետությունը, քննարկվում են տարաբնույթ հարցեր և կայացվում որոշումներ:</p> <p>3.Կրթական ծրագրերի շարունակական բարելավումն ապահովող կանոնակարգային և ընթացակարգային հենքի առկայություն:</p> <p>4.Կրթական ծրագրերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության հասանելիություն ֆակուլտետի շահառուների համար:</p> <p>5. Շրջանավարտների հետ հետադարձ կապի պահպանում և ընդլայնում:</p> <p>6.Արհեստավարժ, բազմամյա փորձ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ:</p> <p>7.Արգասաբեր աշխատանքի գնահատման և խրախուսման մեխանիզմի առկայություն:</p> <p>8. Ուսանողակենտրոն գործունեություն:</p>	<p>5.Հետազոտական աշխատանքներում երիտասարդ դասախոսների և ուսանողների ներգրավվածության ցածր մակարդակ:</p> <p>6.Քիչ է ֆակուլտետի դասախոսների՝ միջազգային գրախոսվող ամսագրերում հրապարակումների քանակը, նաև գիտական հետազոտությամբ զբաղվողների քանակը</p> <p>8.ՊԴ կազմի սերնդափոխության անհրաժեշտություն:</p>
--	---

<p>9. Ոլորտային նորարարությունների տեղայնացման միտվածություն:</p> <p>10. Ֆակուլտետի պրոֆեսորադասիտական կազմը համալրված է ոլորտի առաջատար գործնական ուղղվածությամբ մասնագետներով, այդ թվում նաև հանրապետության առաջատար բուհերից հրավիրված մասնագետներով:</p> <p>12. Տարածաշրջանում ՄԿԾ-ների իրականացման մրցակցային առավելություն:</p> <p>13. Կայուն հետաքրքրվածություն ՄԿԾ-ներով:</p>	
<p>Հնարավորությունները (Opportunities)</p>	<p>Վտանգները (Weaknesses)</p>
<p>1. Շրջանավարտների պահանջվածությունը աշխատաշուկայում:</p> <p>2. Գործատուների և մյուս շահակիցների հետ համագործակցության ընդլայնում կրթական ծրագրերի մշակման և իրականացման,</p>	<p>1. «Սոցիոլոգիա» մասնագիտության ուղղվածությամբ դիմորդների ներգրավվածության խնդիր:</p> <p>2. «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա», «Սոցիալական մանկավարժություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»</p>

<p>արտաքին փորձաքննության, ինչպես նաև պրակտիկաների իրականացման գործընթացներում:</p> <p>3. Գործընկեր բուհերի և կազմակերպությունների հետ կրթական և գիտական համագործակցություն:</p> <p>4. Դիմորդների ներգրավման նպատակով մասնագիտական կողմնորոշման դպրոցի հիմնում:</p> <p>5. ՄԿԾ-ների ակնկալվող վերջնարդյունքների ապահովում կրթական հաջորդ աստիճանի ուսուցման համար</p> <p>6. Ակադեմիական ներքին շարժունության հնարավորություն ՀՀ այլ բուհերի հետ</p> <p>7. Ֆակուլտետի վերազինում և էսթետիկ հարդարում:</p>	<p>մասնագիտությունների ուղղվածությամբ դիմորդների ներգրավվածության խնդիրը:</p> <p>3. «Դեկորատիվ կիրառական արվեստ» և «Համակարգչային գրաֆիկա» մասնագիտությունների ուղղվածությամբ դիմորդների ներգրավվածության խնդիրը:</p> <p>4. ՊԴ կազմի սերնդափոխության և երիտասարդ կադրերով համալրման խնդիրներ (այդ թվում ցածր աշխատավարձ):</p> <p>5. Մարզական ոլորտի ներկայացուցիչների մոտ գիտական աշխատանքով զբաղվելու ցածր մոտիվացիա:</p> <p>6. ՄԿԾ-ների միջազգայնացման և ակադեմիական շարժունության թույլ հնարավորություններ՝ պայմանավորված ուսանողների և դասախոսների լեզվաիմացության ցածր մակարդակով:</p>
---	---

❖ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Հասարակական գիտությունների ֆակուլտետի գործունեությունը միտված է՝ ապահովելու իր կողմից իրականացվող կրթական գործընթացի թափանցիկությունը և հրապարակայնությունը, իր գործունեության մասին ամենամյա հաշվետվության հրապարակմանը և դրան ծանոթանալու մատչելիությանը: Իր գործունեությամբ ֆակուլտետը ապահովելու է հասարակության հետ կապերի զարգացումը և հանրային ծրագրերում դասախոսական կազմի և ուսանողների առավելագույնս ներգրավումը՝ աջակցելով բուհի կրթական, տնտեսական, սոցիալական, գիտական և մշակութային առաջընթացին: Կրթական գործընթացի թափանցիկությունը և հրապարակայնությունը ֆակուլտետի զարգացման առաջնահերթություններից է:

Հասարակական գիտությունների ֆակուլտետում գործում է հաշվետվողականության սկզբունքը, որը սահմանված է ամբիոնի, ֆակուլտետի, բուհի կանոնադրություններով և կանոնակարգերով: Ամբիոնների հաշվետվությունները հնարավորություն են տալիս՝

գնահատելու վերջիններիս գործունեության արդյունավետությունը, վերհանելու թերությունները, քայլեր ձեռնարկելու դրանք վերացնելու ուղղությամբ:

Հաշվետվողականության այս համակարգը նպաստում է ֆակուլտետի կառավարման բարելավմանը. գնահատվում է կատարված աշխատանքների արդյունավետությունը, վեր են հանվում ձեռքբերումները և բացթողումները՝ դրանց պատճառները բացահայտելու, ֆակուլտետի հետագա գործունեությունը բարելավելու նպատակով:

Հասարակական պատասխանատվության և հասանելիության ապահովման նպատակով գործում են բոլոր հնարավոր միջոցները: Ֆակուլտետի կրթական և հասարակական լայնածավալ գործունեությունը ներկայացված է նաև սոցիալական հարթակներում՝ մեծ լսարանի առջև ապահովելով հանրային հաշվետվողականության գործընթացը:

❖ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հասարակական գիտությունների ֆակուլտետը հասանելիությամբ, ճկուն կառավարմամբ և առաջընթացի ձգտմամբ բաց է համագործակցության համար պետական և հասարակական բազմաոլորտ կառույցների հետ: Ֆակուլտետը ձգտում է պայմաններ ստեղծել երկարաժամկետ և արգասաբեր համագործակցության համար, ինչը նպաստելու է դասախոսական կազմի կարողությունների զարգացմանը, ինչպես նաև ուսանողների շարժընթացի ապահովմանը մասնագիտական ոլորտում: Համագործակցությունների ձեռքբերման գործում մեծ ներդրում ունեն մասնագիտական ամբոնների դասախոսները: Ֆակուլտետում ստեղծվել է համագործակից կառույցների տվյալների շտեմարան:

Բազմաոլորտային համագործակցության առավելություններն են՝

- նոր պրակտիկ համագործակցության ուղղությունների հայտնաբերում և զարգացում,
- գիտակրթական կայուն զարգացման ապահովում,

- նորարարական փորձի տեղայնացում,
- համատեղ ծրագրերի և միջոցառումների իրականացում,
- գործատուների շրջանակի ընդլայնում:

Համագործակցության արդյունքում իրականացվել են հետևյալ ծրագրերը.

- ❖ «Հայկական Կարիտաս» բարեգործական հասարակական կազմակերպության հետ համատեղ ներառականության գործընթացի ներդրմանն ու զարգացմանն ուղղված ծրագրեր:
- ❖ «Կանանի» հասարակական կազմակերպության հետ համագործակցություն:
- ❖ Դպրոցների հետ համագործակցություն:
- ❖ Վիճակագրական վարչության, ՄՄԾ-ի հետ համագործակցություն:
- ❖ Հայկական Կարիտաս, «Տարեցների տնային խնամք և ցերեկային խնամք» ծրագրերի շահառուների, աշխատակազմի հետ մասնագիտական, մշակութային հանդիպում՝ նվիրված տարեցների միջազգային օրվան:
- ❖ Կամավորական աշխատանք մարզում ներառական կրթություն իրականացնող դպրոցներում:
- ❖ Կամավորություն նախակրթարաններում և զարգացման կենտրոններում:

❖ **ԲՈՒՀ-ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

❖ **ՓՈՐՁՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳՐԵՐ**

Հարցի կարևորությունը պայմանավորված է ՇՊՀ-ի նոր Ռազմավարական ծրագրով (խնդիր 4-րդ՝ Հասարակական պատասխանատվություն բաժին): Որպես գործողություն՝ այն ամրագրված է **Կամավորության մշակույթի ձևավորում և խթանում բաժնում**, իսկ կատարողականի ցուցիչն է՝ **Կամավորությունը խրախուսող մշակված և ներդրված մեխանիզմները (Նպատակ 3՝ Հանրային ներգրավում՝ Խթանել միջազգայնացումը և սոցիալական գործընկերությունը)**: Ֆակուլտետի շատ ուսանողներ կամավորական աշխատանքներ են իրականացնում մարզի պետական և հասարակական ոլորտային տարբեր կառույցներում՝ լավագույն արդյունքներ ցուցանելով, միաժամանակ հրնթացս դառնալով նաև այդ կառույցների աշխատակիցները:

Ուսանողներն ամրագրված հաջողություններ են ցուցաբերել նաև փորձնակության ոլորտում, ինչը հանգեցնում է այն եզրակացության, որ հարկ է զարգացնել այս գործընթացը «Մոցիոլոգիա» և «Մոցիալական աշխատանք» մասնագիտական ոլորտներում:

Հաշվետվությունը ներկայացնելիս հետագոտել ենք հասարակական տարբեր կառույցներում՝ Նոր լույս, Ժեստ, Էմիլի արեզակ, Կարիտաս, Կանանց իրավունքների տուն, «Կանանի» հոգեբանական կենտրոն, Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն, Երիտասարդների տուն, Ռեստարտ Գյումրի և այլ կառույցներում, նաև զարգացման կենտրոններում կամավորություն անող ուսանողների գործունեությունը: Կամավորությունը նպաստում է ինքնիրացմանը, մասնագիտական փորձի զարգացմանը, ինչպես նաև հանրային կապեր հաստատելուն:

Նշենք, որ հարցի համատեքստում ամենաբարձր ցուցանիշը գրանցել են «Հոգեբանության» և «Մոցիալական աշխատանք» մասնագիտությունների ուսանողները:

❖ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ֆակուլտետի ամբիոնների որակի ապահովման գործընթացների համակարգման գործառույթները կատարում են ամբիոնի որակի ապահովման համակարգողները, ովքեր հաշվետու ուսումնական տարում մասնակցել են կենտրոնի կողմից կազմակերպված նիստերին, քննարկումներին, ապահովել տեղեկատվության փոխանցումը դասախոսներին և նրանց ներգրավվածությունը համալսարանի կառավարման և որակի ապահովման գործընթացներին՝ կատարելով որակի ապահովման գործընթացներին աջակցող այլ գործառույթներ:

Ֆակուլտետի որակի ապահովման համակարգողը հաշվետու ուսումնական տարում մասնակցել է կենտրոնի կողմից կազմակերպված նիստերին, քննարկումներին, ապահովել տեղեկատվության փոխանցումը ուսանողներին և նրանց ներգրավվածությունը համալսարանի կառավարման և որակի ապահովման գործընթացներին՝ կատարելով որակի ապահովման գործընթացներին աջակցող այլ գործառույթներ: